

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Այս Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունուում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԴՐԱԿՆԵՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻՒՄ

«Մշակ» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն
և մէկ և տասն մասով՝ 9 ռ., ինն և ութ մասով՝ 8 ռ., եօթ մասով՝ 7 ռ., վեց մասով՝ 6 ռ.,
հինգ մասով՝ 5 ռ., չորս մասով՝ 4 ռ., երեք մասով՝ 3 ռ., երկու մասով՝ 2 ռ., մի
մասով՝ 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բազարայա և Բարոնայա փողոցի անկիւն):
Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Յայտարարութիւններ ընդունուում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹԻՒՆ

Մի քայլ եւ. ծառ ընդհանուր է.—ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Համակերպ առաջարկութիւն. Ֆէր
դանի անկարգութիւնները. Մասնագրու-
թիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Պատերազմ. Զինված-Լեզուարդի. Մակեդոնա-
կան խնդիրը. Նամակ Պարսկաստանից. Արտա-
քին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՆԱԿԱՆ. Կին
թէ՛ վաղը:

ՄԻ ՔԱՅԼ ԵՒՍ

Կառավարութիւնը նոր հրատարակած
մի օրէնքով կարգադրեց եկող տարվանից
մայիսի Ալեքսանդր II կայսրի դատաստա-
նական օրէնքները Սիբիրայի, Սամար-
կանդի, Ֆերգանի, Սեմիրեչենսկի, Ալմաթինս-
կի, Սեմիպալատինսկի, Ուրալի և Տուր-
քայի շրջաններում: Սիբիրի դատաստա-
նական օրէնքները շնորհելուց յետոյ դա երկ-
րորդ խոշոր կուլտուրական քայլն է, որ
անում է ռուսաց կառավարութիւնը, հը-
րապարակական, մարդասէր դատավարու-
թիւն մտնելով այն երկիրներում, որնե-
ցի մի քանիսը 25 տարի առաջ դեռ էին
էլ նուաձիւմ: Լանկեթեմուրի և ասիա-
կան այլ բանակների հայրենիքը, որ մի
ժամանակ սարսափ էր տարածում իր ար-
շաւանդներով, այժմ այնքան սովորել է
կուլտուրական խաղաղ կեանքին, որ նոյն
իսկ արժանանում է Ալեքսանդր II-ի դա-
տաստական օրէնքով: Սա շատ միւս-

թարական երկայթ է, որ ցոյց է տալիս
թէ նոյն իսկ իրանց անցեալով իբրեւ վայ-
րենի, հակաիւրաւական տարր հուշակ-
ված ազգերը կարող են առաջադիմել, նոր,
ազատամիտ հիմնարկութիւնների պահանջ
մտնելը:

Դատաստանական օրէնքով յիշեալ տե-
ղերում կը մտնէին մի քանի բացառու-
թիւններով, համարեա այն չափով, որ
գոյութիւն ունի Կովկասում: Այսպէս,
դուրս է գցված երգուեսների դատարա-
նը. հաշտարար դատաւորները չեն ընտր-
վում, այլ նշանակվում են արդարադատու-
թեան միւստորի կողմից: Անշուշտ, այդ
պարտութիւնները տեղական չեն լինի,
որքան ժողովուրդը կընտրականայ նոր կար-
գերին, այնքան կը մօտենայ այն ժամա-
նակը, երբ հարկաւոր կը համարվի մոյցնել
և այն հիմնարկութիւնները, որոնք գոյու-
թիւն ունեն Ռուսաստանում:

Կառավարութեան այդ համակերպ քայ-
լը մի և նոյն ժամանակ մի ահաբեկ ապ-
տակ է ռուս օրսկուրանների այն վոհ-
մակին, որ շարունակ ատամ է կրծտաց-
նում Ալեքսանդր II-ի դատարանների դէմ,
որ միշտ բլաւում է թէ ժողովուրդը պատ-
րաստված չէ ազատամիտ օրէնքներ ըն-
դունելու: Սեղ մօտ, Կովկասում էլ, վեր-
ջին տարիները այդպիսի աղաղակներ են
լսվում թէ երգուեսների դատարանի և
թէ զեմստօյի հիմնարկութիւնների դէմ:

ԲԱՆԱՍԻՆԱԿԱՆ

ԿԻՆ ԹԵ՛ ՎԱԳՐ

ՍՏՕԿՏՕՆԻՔ

(Թարգմանութիւն)

Մի ժամանակ, մեզանից շատ ու շատ տա-
րիներ առաջ, ինչ աշխարհում մի փոքր ու ան-
նշան կիտալայրնի թագաւորութիւն կար: Սա-
մանակից հօր հոռոպեցիները մոլորին այդ
պետութեան մէջ բարձրագոյն իմաստ մի քանի
հիմունքներ, որոնք կիտալայրնի ժողովրդի հա-
մար մնացին անհասկանալի: Այդ պատճառով
էլ ժողովրդի բնածին դատարարութիւնը աւելի էլ
կոկիկեց և մի կատարեալ պատուհան դարձաւ
երկրի համար: Մասնաւոր վերջ չունէին թա-
գաւորի օտարոտի բնահանութիւնները: Նրա
համար, բացի իր սեփական երեակայութիւնից,
ուրիշ ոչ մի օրէնք, հաստատութիւն չը կար:
Թագաւորի հանգրեւներ չէնց յայտնվելուն պէս
պէտք է կատարվէին: Նրա թագաւորի հրաման-
ները անարգել գործարկվում էին, այն ժամա-
նակ նրա ուրախ տրամադրութիւնը, նրա պար-
կները հանդատացնում էին պաշտականներին,
որոնք միշտ պէտք է զոգային թագաւորի ա-
ռաջ: Վայ նրան, ով նոյն իսկ տատանվէր հնա-
զանդվել թագաւորին կամ իր չափը չը ճանա-
նէր:

* Սոսկոտն ամերիկացի գրող է: Նրա այս փոքրիկ
վէպիկը մեծ ազդեցութիւն ունեցաւ Ամերիկայում և
այստեան դարձաւ բարձրագոյն գիտարժեք և տարօր-
ին վէպերի վաճառքի իմաստով, որովհե-
տեւ հիշեալ վէպը ընթերցողին է առաջադրում այդ բա-

Բայց կառավարութիւնը մի շարք գործե-
րով ցոյց տուեց, որ գուր է այդ անկոշ
հայրենասէր խաւարաւորների վայնասու-
նը: Ցաւով պետութեան ծայրերում ապ-
րող ազգութիւններին այն ամենը, ինչ
տուած է ռուս ազգաբնակչութեան, կա-
ռավարութիւնը արտայայտում է իր վրս-
տահութիւնը դէպի այդ ազգերը: Կաս-
կած չը կայ, որ ամենքը կաշխատեն ար-
դարացիել այդ վստահութիւնը: Նոյն իսկ
Ֆերգանի շրջանում մայիսին տեղի ու-
նեցած ցաւալի դէպքը արդեւ չը համար-
վեց ժողովրդին դատաստանական արդար
կարգեր շնորհելու համար:

ՅԱՆԱՍԻՆԱԿԱՆ Է

Անգլիական «Daily Chronicle» լրագիրը,
ընկելով այն վաճառականական վտանգա-
ւոր խաղերը, որ կատարվում են հացի
առեւտրի վերաբերութեամբ, առաջարկում
է նոր օրէնք սահմանել հացալաւանութեան
մասին: Այդ օրէնքով պէտք է մի-
ջոյններ ձեռք առնվեն հալածելու և պատ-
ժելու այն անձանց, որոնք թողլ կը տան
հացը սպեկուլեացիայի և բորսային խալի
առաքիլայ շինել: Լրագիրը, աչքի առաջ
ունենալով, որ հացի սպեկուլեացիան տա-
րածված է և Ամերիկայում, յոյս ունի, որ
եթէ Անգլիայի և Ամերիկայի մէջ կայանայ
զաշխակցութիւն, առաջին գործերից մէկը
կը լինի կուռէ հացի հարստահարիչների
դէմ, որոնք յանցանք են գործում միլիո-
նաւոր մարդկանց պարուստի դէմ և այդ-
պիսով ներկայանում են մարդկութեան ա-
ռաջ իբրեւ վնասակար և թշնամի ոյժ:

Ս. Զմարտի: Միացեալ Նահանգներում
մեծ դրամատուրեր յաճախ թողլ են տա-
լիս իրանց արուեստական կերպով բարձ-
րացնել հացի գինը, իրանց ձեռքը գցելով
հացի զլխաւոր պաշարները: Հէնց նորեքս,
երբ սկսվեց սպասուամերիկական պատե-
րազմը, մի քանի առեւտրականներ ահա-
բեկ ընկան իրենց հաց գնեցին և բարձ-
րացրին գինը ոչ միայն Ամերիկայում, այլ
և Նիւթայթում, որով կողմնակի կերպով
առաջ բերին Նիւթայթի, Սպանիայի և
մասամբ Ֆրանսիայի մէջ մեծ յուզմունք-

ներ: ձիշդ է, այդ խաղը շատ թանգ նրս-
տեց մի քանի գրամատերերին և եղան
սաստիկ դրամական վնաս կրող անձինք,
ինչպէս, օրինակ, Զիկաքս քաղաքի հա-
րուստ առեւտրական Ջօզէ Լէյսերը, որ կորց-
րեց մօտ տասն միլիօն ռուբլի, բայց և
այնպէս այդ հանգամանքը ամենեւին իրա-
տական չէ ուրիշ աւելի ծարպիկ հարստա-
հարոյնների համար և եթէ նոյն իսկ
իրատական է, յամենայն դէպս ոչ թէ հա-
սարակական-բարոյական տեսակետից, այլ
զուտ առեւտրական կողմից:

Եթէ այնպիսի ուժեղ երկիրներ, ինչպէս
են Անգլիան և Ամերիկան, ուր ինքնօգնու-
թեան և ինքնապաշտպանութեան զգաց-
մունքը խոր արմատներ է գցել և հաս-
տատուութիւն կարծիք իսկապէս դեր է կա-
տարում ընդհանուր գործերի մէջ, եթէ
այդպիսի երկիրներում, առում ենք, նրանք
չեն կարողանում զսպել փողային վիշապ-
ներին, որքան աւելի խեղճ դրութեան
մէջ են մեր երկիրները, որոնք մարդիկ սո-
վորել են աղէտների առաջ միայն զուլս-
ները ծուր և սպասել, որ արհաւիրքը
կամ ինքն իրան կամ չորոտմութեամբ Աս-
տուծոյ անցնի: Սե՛ծ դժբաղդութիւն է,
երբ մի երկիր, կամ մի ամբողջ պետու-
թիւն ստիպված է թշուառութիւն և
բաղցածութիւն կրել միայն այն պատ-
ճառով, որ նա անկարող է զսպել հարս-
տահարիչներին, և չէ սովորել կազմակեր-
պել իր գործերը այնպէս, որ նա խաղա-
լիք չը դառնայ ուժեղների ձեռքին:

Այդ պատճառով, հետաքրքրական է թէ
ինչ հետեւանքների և եղբակցութեան կը
գան մեզանից աւելի լուսավորված եր-
կիրներում հացի խնդրի վերաբերութեամբ,
որ հերթական է դարձել համարեա ամ
բոլոր աշխարհում: Նրեցիք ունի ընդհա-
նուր բնաւորութիւն և մեղք կարող կը
լինէինք օգտվել ուրիշների մշակած ծրա-
դիրներից: Ցանկալի է, որ անգլիական մա-
մուլը սաստիկ արշաւանք սկսի հացի սպե-
կուլեանտների դէմ, և շարունակի պա-
հանջել որ և է օրինական միջոց՝ այդ
անողոր հարստահարութեան դէմ: Դա ան-
հետեւանք չի անցնի և ուրիշ երկիրների
համար:

Կատարի վարկին, որը յարձակվում էր մեղա-
դրեալի վրա և տեղի ու տեղը լափում նրան:
Այս տեսակ վախճանք ամենքը համարում էին
համ ակնեւն ապացոյց այն բանի, որ մեղա-
դրեալը յանցաւոր էր, համ էլ արժանաւոր պա-
տիմ նրա գործած յանցանքը: Այդ ողբերգական
տեսարանի ժամանակ հնում էին պղնձե դա-
ղակներ, իսկ լալկան կանաչ սկուտ էին ի-
րանց վայնասուտը, համաձայն հույց սրբազո-
րած սովորութեան: Ամբողջ գլխակոր ու վնաս-
ված վերապաշտում էր տուն: Ամենքը դարձու-
րում, սարսափաւոր էին լինում, երբ որ տես-
նում էին թէ ինչպէս իրանց աչքի առաջ քաղ-
ցից կատաղած գաղաղը զգզվում էր մի անվե-
հեր երիտասարդին կամ աղքատը ձեռնաւոր
իսկ եթէ մեղադրեալը բախտը բերում էր՝ նրա
ընտրած ու բացած դուռից դուրս էր գալիս
մի կին, որը յատկապէս ընտրվում էր ամբողջ
թագաւորութեան ամենագեղեցիկ, արիւց էր մի-
ջոյնը, այն հասակի ու դատակարգի, կրից էր մե-
ղադրեալը: Այս դէպքում մեղադրեալը միանգա-
ման ամուկ էր համարվում: Նրա առաջ դուրս
կիող գեղեցկուհին պէտք է նրա ամենեւու-
թեան պարգիւր դատարի: Ամբողջապէս կատա-
րում էին նրանց գաղաղի հանդէսը, թէկուզ մա-
հից նոր փրկված երիտասարդը ամուսնացած
լինէր, կամ թէ նրա ուղքն ու միտքը մի ուրիշ
վրա լինէր ուղղված, — այդ մի և նոյն էր:

Ի՞նչ արած. պէտք էր հնազանդվել: Այդ տե-
սակ եղանակով դատելու դէմ թագաւորը ոչ մի
բողք, ոչ մի ընդդիմութիւն չէր կարող բեր և
տեսնել: Ինչպէս այն դէպքում, երբ որ և է
յանցաւոր էր դատվում, այնպէս էլ այս դէպ-

չէր, — այդ դէպքում կատարի բանակալի աչքերը
արտայայտում էին արհուրուշտ վրէժնորու-
թեան անպակաս ուրախութիւն:

Թագաւորը սիրում էր անհնազանդներին, բո-
ղբողներին չէնց այն հրճուանքի համար, որը
զգում էր նա՝ այդ անհնազանդներին և բող-
բողներին ջախջախելու: Այս բանակալը մի բան
էլ սովորեց հոռոպեցիներից — սենեկալ մի կըր-
կէս: Սրա մէջ էլ բարբարոս ու ամեն բան
իր քեֆին յարմարեցնող թագաւորը մի փոփո-
խութիւն մտցրեց: Կրկէսի նոր չէնքը ոչ թէ
բանաստեղծների մրցման կամ ի պատիւ առ-
տուածների կատարվող տօնախմբութիւնների
համար էր, ոչ էլ միջոց իսկ ըմբիշների ու սու-
սերամարտիկների համար: Թագաւորի հրամանով
կրկէսի ընդարձակ սրահները, նրա խորհրդաւոր
մուկ կամարները, երկար միջանցքները պիտի
ժառանգէին արդարադատութեան վճիռները գոր-
ծարկելու համար:

Անկողմնապահ, անկաշառ «ճակատագրի» վը-
ճիւղ յայտնվելուց յետոյ, այդ կրկէսը պէտք է
պատմէր յանցանքը կամ վարձատրել անմեղու-
թիւնը այնպիսի մի եղանակով, որի նմանը եր-
բէք տեսնված չէր: Այդ խորհրդաւոր չէնքի ա-
նունքը զրկն «Արքայական կրկէս»: Այս ա-
նունքը շատ սազում էր շինութեան. թէպէտ
կրկէսի յատկապիւրը և շինութեան կազմը յիշեց-
նում էին հարեան ազգերի ճարտարապետութիւնը,
սակայն նրան ինչ բանի ծառայեցնել և ինչի
համար գործարկել բարբարոս թագաւորի հնա-
րալիւտութեան և հիւանդոտ երեակայութեան
արդիւնքն էր: Չը նայելով որ այդ թագաւորը
իր ժամանակի թագաւորներից ամենայնայնա-

էր, սակայն նա չէր ընդունում ոչ օրէնք, ոչ
կարգ ու կանոն: Նա իր քանաձաձութիւնները, իր
վարք ու բարքը ամեն օրէնքից վեր էր դառնում:
Կարծես թէ այդ թագաւորը անկարգադրելի,
անօրինակ բարբարոսական հնարներով ուղւում
էր իր շարքաւորութիւն հպատակների հնազանդու-
թեան չափը սրելը:

Երբ որ մէկը մեղադրվում էր մի ծանր յան-
ցանքի մէջ, այդ մասին հաղորդում էին թագա-
ւորին: Սա էլ հրաման էր տալիս ժողովրդին
հրակրել կրկէս: Նշանակած օրը ամբողջ լուռ
ու մուռ ճառարվում էր կրկէսը. թագաւորը,
չըմբապաշտված պաշտականներով, բացմում էր
գահի վրա: Յետոյ, նշան տալուն պէս՝ բաց էին
անում վանդակի դուռը, որտեղից առաջ էր
գալիս մեղադրեալը: Սա իր առաջ նկա-
տում էր երկու՝ բուրդով միմեանց նման և
ամուր փակված դռներ: Այդ երկու, միմեանց
նման դռներից մէկն ու մէկը մեղադրեալը
պարտաւոր էր բանար: Թէ՛ որ բանար, այդ իր
գլխանաւոր բանն էր, — ընտրութեան մէջ նա
անապաւան ազատ էր: Ոչ մէկի աղիցեութիւնը
չէր կարող սեղադրեալը համար նշանակութիւն
ունենալ, ոչ ոք չը պէտք է խաղաղութիւն կեանքի
կամ մահուան անկողմնապահ վճիռ: Այդ դուռ-
ներից մեղադրեալը պէտք է սպասէր կեանք
կամ մահ:

Այսպիսի ուրեմն, արդարադատութեան գործը
կամ մեղադրեալի դատավճիռը կախված էր
բախտի բերմունքից: Եթէ ճակատագիրը
մեղադրեալի համար սահմանել էր մահ, այն
ժամանակ, նա իր ընտրած դուռը բանալիս,
հանդիպում էր դէմ առ դէմ կանոնած քաղցած,

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿՐԵՆԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Պետերբուրգի ռուսաց լրագրողների մէջը մի հարց է յարուցել, որ, անկասկած, կարեւոր է ոչ միայն ռուսաց, այլ և՛ հայոց հոգեորականութեան համար: Այդ լրագրողը, «С. Петерб. Вѣдомостѣ», այն միտքն է յայտնում, որ մինչդեռ ընդհանուր դատարարները իրաւունք ունեն որոշ ժամանակներում, պարբերաբար, հաւաքելով, ընդհանուր ժողովներ կազմել քննելու և լուծելու իրանց դատարարները վերաբերեալ ընդհանուր և մասնաւոր հարցերը, մի դատակարար ոչ միայն չէ օգտուում այդ իրաւունքից, այլ և ձգտում չէ ցոյց տալիս օգտուելու. այդ դատակարարը հոգեորականութիւնն է: Լրագրողը խորհուրդ է տալիս հոգեորականութեան, որ նա պարբերաբար եկեղեցական ժողովներ գումարի, ուր հոգեորականները կարող են չփնջել միմեանց հետ, մտքերի փոխանակութիւն կատարել, մտածել իրանց կարիքները և գործերի մասին, ընդել և լուծել թէ՛ հոգեորականութեան վերաբերեալ և թէ՛ նրա հետ կապ ունեցող դանազան հարցեր, և այդպիսով նպաստել եկեղեցական դատակարարի նիւթական և մտաւոր զարգացման:

Ձէ կարելի համակրութեամբ չը վերաբերվել այդ առաջարկութեան և չը ցանկալ, որ նա իրաւորովի և մեր հոգեորականութեան վերաբերմամբ: Ոչ մի դատակարար, լինի նա առևտրական, արհեստաւոր, գիտնական, թէ՛ հոգեորական, չէ կարող կատարելագործվել, առաջագնացել, և թէ՛ նա ամենից առաջ ինքն իրան չէ ընդհանուր և մտածել իր վրա կեցող չէ գործում, ինքն չէ մտածում իր պակասութիւնները, մերկացնում իր թերութիւնները. իսկ այդ հարաւոր է գլխաւորապէս ընդհանուր ժողովների միջոցով և այդ միջոցով դիմում են բոլոր դատակարարները և չոչափելի օգուտներ ստանում: Ինչու նոյն միջոցին չը դիմի և հոգեորականութիւնը. ինչու նա չը վերանորոգի այն գեղեցիկ և օգտակար սովորութիւնը, կարգը, որին միշտ դիմել է եկեղեցին և հոգեորականութիւնը պատմական դարերի ընդմիջումը:

Մեր հոգեորականութեան ներկայ ցուալի վիճակը, այդ վիճակից դուրս դալու անհրաժեշտութիւնը, քահանայական հարցը, որ միշտ առանձին կարեւորութիւն է ունեցել, առաջ և այժմ էլ սաստիկ ընդհանուր առիթ է դարձել, վերջապէս, եկեղեցւոյ քահանայութեան հարցը, — ահա խնդիրներ, որոնց քննութիւնը այլ ևս չէ կարելի յետաձգել: Եւ ամենալաւ եղանակը քննելու այդ կենսական հարցերը, խորհրդակցելու նրանց անսխիւ և մի որոշ եղբակցութեան յանգելու—եկեղեցական ժողովներն են, թէ՛ մասնաւոր—թեմական և թէ՛ ընդհանուր: Եթէ մեր թեմական առաջնորդները սովորութիւն առնած լինին գոնէ 5 տարին մի անգամ թեմի հոգեորականները կամ նրանց ներկայացուցիչները թեմական-եկեղեցական ժողովներ գումարել, եթէ էջմիածինը սովորութիւն ունենար գոնէ 10 տարին մի անգամ ընդհանուր եկեղեցա-

լում՝ գործն անմիջապէս վճռվում էր ամենքի աչքի առաջ:

Արքայական դահի տակ գտնված դռնից դուրս էր գալիս քրմայտուր, որի առջևից քայլում էին պարող կանայք և երաժիշտներ, ոսկե փողեր հնչեցնելով: Քրմայտուրը կատարում էր պսակի ձէսը: Ամեն կողմից լսվում էին երաժշտական փողերի ուրախ ձայներ, ամբողջ էլ մասնակցում էր իր կեցողներով: Փետան առաջնորդում էր հարմարացուին դէպի իր քնակավայրը. մանուկներն էլ նորապսակ գոյգի առջևից ծաղիկներ էին սփռում:

Մնա այն էր դատավարութեան այն եղանակը, որ հնարել էր բարբարոս թագաւորը իր հպատակների համար: Պատավարութեան այս եղանակը օգտակարութիւնը ժողովրդի համար շատ հասկանալի էր: Հպատակների համար աւելի ձեռնտու էր նիւթակալել ձակատաքրի անդարձ ու անորոշ վճիռն, քան թէ՛ դատական թագաւորի բարբարոսութեան, որովհետեւ այս դէպքում վճիռների գործադրութիւնը թագաւորը միշտ կը թողնէր կատարել վաղրին:

Մեղադրեալը չէր կարող իմանալ թէ՛ որ դուռն է տանում դէպի իր փրկութիւն և որը դէպի մահ: Նա բացում էր իր ընտրած դուռը առանց որ և է կողմնակի օգնութեան և մի ակնթարթում մեղադրեալը կամ վաղրի ճիւղաններն էր ընկնում, կամ ընդհակառակը՝ ազատվում և ստանում, իբրեւ պարեկ, գեղեցիկահիւս ամուսին: Այս տարբերակ դատաստանի վճիռներն ոչ միայն ամեն կողմնապահութիւնից վեր էին, այլ և նրանց գործադրութիւնը կատարվում էր այնպիսի արագութեամբ, որ ոչ ոք չէր կարող նրանից

կան ժողով կազմել, տարակերպ չը կայ, որ հայոց եկեղեցւոյ գործերը ներկայումս այնպիսի անմիթութեամբ վիճակում չէին գտնվել: Այդ ժողովներում կը պարզվէին հոգեորականների կարիքները, պահանջները, կը պատկերանար նրանց բարոյական, մտաւոր վիճակը և միջոցներ կառավարելիւն ու կը գտնվէին բուն դրած գեղծութիւնները խախտելու, անկարգութիւնների առաջն առնելու և հոգեորականութեան բարոյական առաջագրիւններն ու մտաւոր զարգացման գործին զարկ տալու: Եկեղեցական ժողովը—միակ միջոցն է, որով հոգեորականութիւնը կարող է համախմբվել, որով նրա զարգացած և առաջագնաց տարրերը կարող են չփնջել անկրթ և անգիտ տարրերի հետ ու բարոյական, կրթիչ ազդեցութիւն գործել նրանց վրա:

ՖԵՐԳԱՆԻ ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անդրկովկասում տեղի ունեցած անկարգութիւնների ակնհայտ օֆիցիէրներից մէկը տպել է իր յիշողութիւնները «Русскій Инвалидъ» լրագրի մէջ: Մի կողմ թողնելով սարկերի գործած յարձակման մանրամասնութիւնները, որոնք յայտնի են կառավարչական հաղորդագրից, առաջ ենք բերում յօդուածի այն կտորը, որ վերաբերվում է ապստամբութեան առաջնորդ Իշանին:

«Մայիսի 21-ին, մօտ ժամի մէկին, տեղիկուսութիւն ստացվեց թէ բերում են ձերբակալված Իշանին: Այդ ժամանակ ես ստացայ բերդապահ զօրքի գլխաւորից հրաման, որ եթէ Իշանի բերելը խլրտում առաջացնէ, ես իմ զորաբաժնի հետ կանդնեմ քաղաքի կենտրոնում, եկեղեցւոյ մօտ: Այդտեղ ես մնացի մինչև որ չլքնայեցին Իշանին և դրին նրան մի առանձին շինութեան մէջ, որը պաշտպանում էին Օրէնբուրգեան կօղակները և հետակ զօրքը: Երբ ես մօտեցայ պատահական, չլքնալիս Իշանը նստած էր աղօթք անող մուկիմանի դիմաց և մերթ-միջով գլուխը կախ էր անում կրծքի վրա: Տեղական լեզուով սուած մեր ոչ մի հարցին նա չէր պատասխանում: Գա մօտ քառասուն տարեկան մի տղամարդ էր, սեռահեր, միջին հասակի և ամուր կազմուածքի տէր, փողբիկ, սրածայր միրուքով: Ինչպէս պատմում են ձերբակալողները, Իշանը ինքն ընկաւ թակարդի մէջ, որից դուրս դալ անկարելի էր: Չարկայի մօտ գտնվող կողակները դիչերը խառնեց, որ Իշանը մօտենում է և չըբաւարանային նրան:

«Ապստամբութիւնը սկսվեց Անդրկովկասից այն պատճառով, որ այդ քաղաքում քիչ ուսու դիւնսեր կան: Գերի վերցրած սարկերի և Իշանի ցուցմունքներից երևաց, որ յարձակվող խումբը թւով մօտ 1000 մարդկանցից էր բաղկացած: Վճռված է եղել յարձակում գործել այնպէս, թայց շուտով լաւ տարածվեց թէ Անդրկովկասի մի ամբողջ բաժանի գործը: Այդ պատճառով վճռեցին շտապեցնել յարձակումը: Իշանը պատմեց ի՛նչքան տեսել է երաւ. «Սարկերը կոտորում են ռուսներին, իսկ ռուսաց զենքահանները ընկնում են ջրի մէջ: Այդ հիման վրա էլ նա խորհուրդ է տուել իսկոյն յարձակ-

խուստիւն: Կրկնի մէջ թագաւորին հրամանով հաւաքված ժողովուրդը չը գիտէր թէ ինչ պէտք է տեղի ունենալ՝ արհեստի տեսարան, թէ պսակի ուրախ հանդէս: Այս անորոշութիւնը այնպէս էր ընթրում ամենքի հետաքրքրութիւնը, որ ուրիշ ոչ մի միջոցով, ոչ մի հնարով չէր կարելի անել:

Տեղի մարտից դուրս էր գալիս կրկնից կամ չափազանց ուրախ կամ սարսափահար եղած: Ժողովրդի փողբաթիւ հատկացող մասն էլ այնպէս էր համոզված, թէ անկողնապահ ձակատաքրն է գործադրում իր վճիռները, այն էլ հրապարակօրէն, ուրեմն և ոչ ոք չէր կարելի մեղադրել անարարութեան մէջ:

Թագաւորը ունէր մի աղջիկ՝ նրա թագաւորութեան ամենաթանկագին դստը, նրա միակ ուրախութիւնը: Թագաւորը շատ էր սիրում նրան, որովհետեւ աղջիկը ճիշդ հօր պատճենն էր, ժառանգել էր նրա կրակաւ բնասութիւնը և անդուկ կամքը: Քարասիրտ բռնակալի հօգին կարծես վերածնվել էր այդ մատաղահաս աղջկայ մէջ: Թագաւորը պատրաստ էր աղջկայ համար գոնե ամբողջ հարգութիւններ: Սակայն, բռնակալի անպիշիւր հպատակներից մէկ յանդուհնց գրաւել աղջկայ սիրտը: Նրկատասարդի գեղեցկութիւնը, քաջութիւնը, հասարակ ծագումը,— այս բոլորը այնպիսի յատկութիւններ են, որոնց հիման վրա նա համարձակ կարող էր դասվել այն վրապեան հերոսների շարքը, որոնք արժանի են վայելելու մի արքայազնի աղջկայ սէրը: Թագաւորի աղջիկը ոչ թէ սիրում, այլ ուղղակի պաշտում էր երկրասարդին: Նա իր սիրոյ ըզ-

վել ռուսներին վրա: Իշանի ծրագրերը հետեւեալն էր: Կոտորել ռուսներին Անդրկովկասում, տիրանալ բերդին. դրանից յետոյ ամբողջ հին Անդրկովկասը իր 60,000 բնակիչներով և չըջակալ զէնքերը (մի քանի հարիւր հազար բնակիչներ) կապուտամբլեն: Կող-արտ-սու հովիտում, սարերում, նա պատրաստել էր մի խումբ, որ պիտի ոտքի կանգնեցնէր Անդրկովկասի հարան լեռների բնակիչներին: Գրանից յետոյ ապստամբութիւնը պիտի տարածվէր Ֆերդանի միւս գաւառներում:

Այդ ծրագրերը, ինչպէս յայտնի է, չաջողվեց:

Մ Ա Տ Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

«Гимнастическія Игры.» Выпускъ первый. Игры безъ снарядовъ. сообразъ А. Скотта. иѣна 25 коп. Тип. Лѣвѣ 1898. («Արեւմտաւարական խաղեր». Ա. Սկոտի):

Թիֆլիսի երկրորդ արական զինանախարի ուսուցիչ Սկոտակ, օգտվելով Ն. Պոկրովսկու «Русскія дѣтскія подвижныя игры» գրքից և Ի. Կլենկի չեխերէն լեզուով գրած «Ներկանախարիչից» «Մարմնամարզական խաղերի մասին», կազմել է մի գրքիչ, որի վերնագիրը բերված է վերև: Գրքիչի մէջ նկարագրված խաղերը գործ են անվել Թիֆլիսում: «Մանուկների հոգատար ընկերութեան» նախաձեռնութեամբ մի քանի անձինք անցնալ տարվայ ընթացքում ծանօթացան այդ խաղերի հետ և նրանցից յարմարագոյնները փորձեցին սովորեցնել երեխաներին, որոնք մեծ հաճութեամբ մասնակցում էին այդ խաղերին: Ներկայ գրքիչի մէջ նկարագրված են միայն չարժու խաղերը, երկրորդ մասում կը նկարագրվեն այն խաղերը, որոնց համար կարեւոր են և գործընթաց: Մարմնամարզական խաղերը զանազանվում են դուռ մարմնամարզութիւնից կամ զինաստիկայից նրանով, որ նրանք աւելի բնական են, աւելի գրաւիչ մանուկների համար և ազատ լինելով միօրինակութիւնից և խիստ ձեւականութիւնից, ամենալաւ միջոցն են թէ ուղեղի հանգստութիւն և թէ ֆիզիկական ոյժերի կազդուրման համար: Գրքիչի մէջ նկարագրված են 6—7 տարեկան մանուկների համար 9 խաղ, ութ տարեկանի համար՝ 10, ինն տարեկանի համար՝ 12, տասն տարեկանի համար՝ 5, տասնմէկ տարեկանի համար 11, տասնեկու տարեկանի համար՝ 9, տասնեկու տարեկանի համար 4 և տասնչորս տարեկանի համար 4 խաղ. ընդամենը 56 խաղ, որոնցից 30 խաղ յարմար են աղջիկների համար: Գրքիչը արժէ 25 կօպէկ և ծախվում է «Մանուկների հոգատար ընկերութեան» օգտին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Վովկասեան ուսումնարանական չըջանի վարչութիւնը մի քանի տեղեւորում արդէն դիմումներ է արել հայոց եկեղեցական-ծխական դպրոցների վարչութիւններին՝ դպրոցական կառուածները և դպրը իրան յանձնելու մասին:

Մեզ հաղորդում են Պարիզից հետեւեալը.

դպրոցները արտադրւում էր ամենաբարձուն կերպով, այն ոյժով, որովհետեւ նա ժառանգել էր իր բարբարոս պապերից: Մի օր հայը իմացաւ այդ տարածութիւնը գաղտնիքը. բռնակալը անմիջապէս կանչեց. իր պարտը կատարած լինել: Առանց երկար-բարակ մտածելու, նա հրամայեց բանտ տանել յանուգին երկուստարդի և պահել այնտեղ մինչև այն օրը, երբ որ կրկնուի կը կատարվի նրա դատավճիւրը: Այդ յանցանքը ամենքի համար մի չը տեսնված, չը լսված բան էր: Թէ թագաւորը և թէ ժողովուրդը սրտատարի սպասում էին գործի վաճաճին: Նրբեք այդ տեսակ յանդուգն յանցանք կատարված չէր: Նրբեք խառն աստղը չէ յանդուգնը այդ աստիճանի մօտենալ արեւին: Այս մի չը լսված ինքնավարաւորութեան օրինակ էր: Գարեթից յետոյ այդ տեսակ դէպքեր շատ են պատահել, իսկ այն ժամանակ դա հրէշաւոր և անհաւատարի էր համարվում:

Արքայական պարտիզում ժողովեցին վաղրի ամենախառաղի տեսակները. այդ ընտրվել գաղաներից ջուկեցին ամենախառաղին: Մի և նոյն ժամանակ թագաւորութեան ամեն ծայրերից ժողովեցին գեղեցիկահիւսներն մի խումբ, որոնցից հասկացող անձինք լնորեցին ամենագեղեցիկն՝ մեղադրեալին արժանաւայել կերպով վարձատրելու համար,—եթէ նա անմեղ դուրս գար:

Ամենքին յայտնի էր երկուստարդի յանցանքը: Նա սիրում էր թագաւորի աղջկան. սա էլ նրբան էր սիրում: Ոչ ոք զրանցից չէր ծածկում այդ: Թագաւորի մտքում անգամ չէր անցնում, թէ նրա հնարած դատավարութեան եղանակը կարող էր այս դէպքը համար սխալ լինել: Թա-

«Արտադատականի մարքերի ընդհանուր տեսուչ բերդիացի Ռէնիս 5 օր առաջ Քէհրանից հասաւ Պարիզ և սկսեց իր պաշտօնը: Սպասվում են նորաւոր փոփոխութիւններ մարապին կարգերի մէջ»:

Մենք առիթ ունեցանք ծանօթանալ անյայտաբերական մի ընկերակցութեան գործունէութեան հետ, որ կարող է գործադրվել և մեր երկրում: Պավլօֆ աւանի անյայտագործների ներկայացուցիչ Նոսովը, որի մասին հաղորդեցինք «Մշակի» անցեալ համարում, հաղորդեց մեզ, որ Պավլօֆ աւանի եօթնասուն հոգեւորականները միմեանց «նա» կազմել են մի ընկերակցութիւն, որ ունի իր վարչութիւնը և կազմակերպել է կանոնաւոր առևտուր, ընդունելով մեծ պատւէրներ մագաղաններից: Վերջին ծանանակցում, երբ բացվեց Մոսկվայում ընդհանուր վաճառատեղի անյայտագործների համար, Պավլօֆ ընկերակցութիւնը ուղարկեց այնտեղ իր ապրանքների նմանները: Մոսկվայի կենտրոնական մագաղանը ժողովում է արգիւնները զանազան տեղերից և նա ուրախ կը լինէր, եթէ կարողանար ստանալ Կովկասից եւս անյայտագործական արգիւններ: Այդ միջոցով նա կը կարողանայ թէ՛ մի օգնութիւն անել Կովկասի անյայտագործներին և թէ՛ հարստացնել իրան բազմատեսակ ապրանքներով:

ԲԱԳՈՒՅՑ մեզ հաղորդում են. «Առաջիկան ընկերութեան և երբ. Բուդապեշտների նաւթահանքերը մինչև յուլիսի 10-ը կը յանձնվեն անգլիական ընկերութեան. առաջինը ծախված է 5,250,000 բուլղարի, իսկ երկրորդը՝ 2,500,000 բուլղարի: Ծախվել է նոյնպէս և «Մասիս» նաւթային ընկերութեան մի մասը 1 1/2 միլիոնով: Թաղիկի նաւթահանքը, Վիշաու ընկերութեան վրա ծախվուց յետոյ, 6,800,000 բուլղար արգիւնք է տուել»:

ՆԵՐԿԻՆՆԻՑ մեզ գրում են. «Թեմական դպրոցի հոգաբարձութեան յունիսի 21-ի վճռով տեսուչ Քարաման վերջնականապէս արձակվեց իր պաշտօնից և այդ մասին արդէն թուրքի զորքից նրան: Այս ուրախալի փաստից յետոյ ցաւակով պիտի հաղորդենք, որ պ. Աբիսողում Յովհաննիսեանը հրաժարվել է տեսուչութիւն ընդունելու: Չը գիտեմք հրաժարվելու պատճառն ինչ է: Հոգաբարձութիւնը նորից դիմել է. այդ առիթով մենք խորհուրդ կը տալին պ. Ա. Յովհաննիսեանին ընդունել թեմական դպրոցի տեսուչութիւնը, համոզված լինելով, որ իր գաղով մեծ ծառայութիւն է անելու մեր դպրոցին»:

ԱԵԱԼՔԱՍԼԱՔԻ գաւառից հաղորդում են. «Մի քանի գիւղական համայնքներին առաջարկված էր լրացնել նրանց վրա մնացած» հարկային ապահովները: Գիւղացիները իսկոյն կատարեցին կարգադրութիւնը և պահանջված գումարը ներկայացրին գանձարան: Սակայն գանձարանը

դատարը մինչև իսկ նախագրւում էր, թէ այդ հանդէսը ինչ տեղ գտարձնութիւն է պատճառելու իրան: Այս տեսակ դէպքեր շատ ընչ էլ պատահելու: Մեղադրեալը ոչ մի ընդգիծութիւն, հակառակութիւն ցոյց չը տուեց: Ժողովուրդին էլ սաստիկ հետաքրքրվում էր և ուղւում էր իմանալ թէ ձակա տաղրի վճիւրը ինչ է լինելու,—միթէ յանցանք բան է հատարակ մահաւանգութիւնը կողմից՝ թագաւորի աղջկայ վրա սիրահարվելը:

Հասաւ նշանակած օրը: Ժողովուրդը ամեն կողմից թափվեց կրկն: Շատ շուտ ամբողջ կրկնելը ցուցեց հանդիսականներով: Ասեղ զեղելու տեղ էր կար: Թագաւորը, պաշտակալներով չըջապատված, բազմեց այն երկու ձակատաքրական դռների դէմ, որոնց նմանութիւնը ամեն մարդու զարհուրեցնում էր: Ամեն բան պատրաստված էր: Նշան տալուն պէս՝ մեղադրեալը առաջ եկաւ: Ամենքը յուզված, նայում էին նրբան: Թէպէտ ներկայ եղողներից շատերը նրան չէին ճանաչում, սակայն երկուստարդի գեղեցկութիւնը, նրա սառնասիրտ ու անտարբեր տեսքը, նրա գեղեցիկ շարժումները հիացրին ամենքին: Ել ոչ ոք չէր մեղադրում նրան արքային աղջկան սիրելու համար: Ո՛վ կարող էր յառաջադրութեամբ դիտել հնորային երկուստարդի զարհուրելի վիճակը: Մեղադրեալը թագաւորի առաջ ծուռն չըբեց, թէպէտ և նրա ուղբերն ու միտքը շատ հեռու էին այն մարդուց, որին նա ողբնեց: Նրա աչքերը թագաւորին չըջապատողներին մէջ որսնում էին մէկի դէմքը՝ արքայազն աղջկայ դէմքը: Թագաւորի աղջիկը իսկի մտքովն էլ չանցկացրեց հեռանալ փախ-

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорист-Мелик. ул. № 13